թէև ուրախ և ժպտալից կերևին նորա համար, որ Ռուսական հողը մտած են և իրեանց պատիւը պահած։ Սակայն քաղցը ստիպած է անսովոր մուրացկանութեան դիմել, և տեղ տեղ անարգանքներ լսել, իսկ շատեր այդ ընթացք քամահրելի համարելով քայլերնին ուղղած են իրեանց Հայրիկին, այն մտադրութեամբ—մեր Հայրիկն է, զմեզ պիտի պահէ, թոյլ պիտի չը տայ, կասէ, գրկիս երեխայն անծիծ և անմայր մնայ, չպիտի թոյլ տայ հայրենիքէ և քաղցրիկ վայելչութենէ զրկուած մի հէգ կին, իր միակ յոյսն եղող զաւակէն զրկուի. նա քանի որ Հայրիկ է, պարտաւոր է մեզ Ստուծոյ և աւուր դատաստանի առաջ, կասէ և ոչ թէ կը խնդրէ, այլ կը պահանջէ։

Որչափ հարսներ և կանայք տեսայ, Վեհափառ Հայրիկ, որք հիւծեալ, գունատ՝ խումբ խումբ կը դիմէին առ Ձեզ, որոց իւրաքանչիւրը մի ձեռով գրկած էր նորածին մանուկ մի, միւսով միւս հիւանդոտ փոքրիկ երեխայի ձեռքէն բռնած քաշ տալով Վեհարան կը դիմէր, այն նուիրական վայրն, ուր դարերով մխիթարուած է Հայ ազգը այլ և այլ հանգամանաց մէջ։ Սա ստինքը տուած էր նորածին երեխայի